## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների անիվների ծռոքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/08» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի դեկտեմբերի 04-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/08-2 պայմանագրում 2018 թվականի մայիսի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (պայմանագրի 3-րդ չափաբաժնի մասով):

Փոփոխության նկարագրություն

Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 8.5, 8.13 կետեր:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**04.12.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՆԻՎՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/08-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «25» մայիսի 2018թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Լալայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 04.12.2017թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/08-2» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆինանսական միջոցներ նախատեսվել են պայմանագրի 3-րդ չափաբաժնի մասով, իսկ մյուս չափաբաժնի մասով ֆինանսական միջոցներ առկա չեն՝ կողմերը որոշեցին Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյաց փ. 31 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 1510012745550100 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00873228 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ա. Լալայան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«04 » դեկտեմբերի 2017 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/08-2» ծածկագրով պայմանագրի
25 մայիսի 2018թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2. | 34351200/320 | Ավտոմեքենաների անիվներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3. | 34351200/322 | Ավտոմեքենաների անիվներ | | | | | | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | 147600 | **147600** |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան
/ստորագրություն/Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Ռուբինյաց փ. 31
Հ/Հ՝ 1510012745550100
ՀՎՀՀ՝ 00873228
«Արարատբանկ» ԲԲԸ
Տնօրեն՝ Ա. Լալայան
/ստորագրություն/Կ.Տ